

ՀԱՐՑԱՇԱՐ

ՏՐԱՎՏՈՐԻՍ-ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՏՐԱՎՏՈՐԻՍ-ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

1. Տրակտորների դասակարգումը
 - Ըստ նշանակության, ընթացքային մասի, կառուցվածքի և անվանական քարշային ուժի
2. Տրակտորի շարժիչներն ըստ վառելյանյութի տեսակի դասակարգումը
 - Դիզելային վառելիքով աշխատող
3. Քառատակտ դիզելի աշխատանքի կարգը
 - 1-3-4-2
4. Շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը
 - Ծնկածև լիսեռից, շարժաթևից, մխոցից, թափանիվից
5. Գազաբաշխման մեխանիզմի կառուցվածքը
 - Բռունցքավոր լիսեռից, հրիչներից, փականներից
6. Գազաբաշխման մեխանիզմի դերը
 - Վառելանյութի ներմուծում, այրվող գազերի հեռացում, վառելանյութի մատուցում շարժիչին՝ ըստ աշխատանքային կարգի
7. Շարժիչի հովացման համակարգի տեսակները
 - Ջեղուկային, օդային
8. Հովացման համակարգի նշանակությունը
 - Շարժիչի տաքացած մասերից ջերմության հեռացում և դրա աշխատանքի նորմալ ռեժիմի պահպանում
9. Հովացման համակարգի կառուցվածքը
 - Ռադիատորից, ջրի պոմպից, թերմոստատից, ջրային շապիկից, օդափոխիչից
10. Յուղման համակարգի նշանակությունը
 - Շարժիչի շփվող մասերի յուղում, հովացում
11. Յուղման համակարգի կառուցվածքը
 - Յուղի պոմպից, յուղի ռադիատորից, յուղի ցուցիչից, խողովակաշարերից
12. Շարժիչի սնուցման համակարգի կառուցվածքը
 - Վառելիքի բաքից, բարձր ճնշման խողովակաշարից, բարձր ճնշման պոմպից, գոլիչներից, բոցամուղից
13. Շարժիչի սնուցման համակարգի նշանակությունը
 - Շարժիչի ապահովումը վառելիքախառնուրդով
14. Շարժիչի գործարկման ձևերը
 - Էլեկտրական մեկնարկիչով, օժանդակ շարժիչով
15. Տրանսմիսիայի կառուցվածքը
 - Փոխանցումների տուփ, կցորդման ազուլց, կարդանային փոխանցում, տանող կամրջակ

16. Փոխանցման տուփի նշանակությունը
 - Փոխել տրակտորի քարշային ուժը և շարժման արագությունը
17. Արգելակման համակարգի նշանակությունը
 - Արգելակել մեքենան՝ ըստ անհրաժեշտության
18. Բերքի վրա ազդող հիմնական գործոնները
 - Կենսաբանական, հողակլիմայական, ագրոտեխնիկական, տեխնիկական գործոնները
19. Պարարտանյութի տեսակները
 - Օրգանական և հանքային
20. Որո՞նք են հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի մեքենաները
 - Հացահատիկահավաք կոմբայն, անջատ բերքահավաքի հնձիչ
21. Հողամշակման մեքենաների տեսակները
 - Հիմնական և հատուկ մշակության
22. Հողամշակման մեքենաների անվանումները
 - Գութաններ, շարքացաններ, երեսվարիչներ, կուլտիվատորներ, գլանվակներ, ֆրեզեր
23. Ցանքի և տնկման մեքենաների դասակարգումը
 - Ըստ նշանակության, ցանքի եղանակի, ցանվող մշակաբույսի տեսակի, տրակտորի հետ ագրեգատավորման եղանակի
24. Սրսկիչների դասակարգումը
 - Հատուկ և ունիվերսալ, ծավալային փոքր և ուլտրածավալային, ձողային և քամհարային, շայակի, տրակտորային, ավիացիոն, կցովի կախովի և կիսակախովի
25. Տիպային սրսկիչների կառուցվածքը
 - Բարից, գտիչից, հեղուկի մոխից, խողովակաշարից, ռեդուկցիոն փականից, ծայրապանակից
26. Ի՞նչ հատկանիշների հիման վրա են տարբերակվում խոտհնձիչների տեսակները
 - Ըստ կտրող գործընթացի, ագրեգատավորման եղանակի, կտրող ապարատների քանակի և տեսակի
27. Ո՞վքեր ունեն տրակտորներ, կոմբայններ և մասնագիտացված մեքենաներ վարելու իրավունք
 - Համապատասխան փաստաթուղթ ունեցողը
28. Ինչպիսի՞ գործողություն պետք է իրականացնի տրակտորիստը աշխատանքից առաջ
 - Ստուգի տրակտորի տեխնիկական վիճակը
29. Ի՞նչ պետք է կատարել գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումից առաջ
 - Ստուգել տեխնիկայի վիճակը
30. Ի՞նչ է անհրաժեշտ անել դժբախտ պատահարների ժամանակ
 - Տուժողին ցուցաբերել առաջին օգնություն
31. Համաձայն ագրոտեխնիկական պահանջների վարի խորության տատանումը քանի տոկոսին չպետք է գերազանցի
 - 5-10 %

32. Գուլթանի ո՞ր օրգաններն են համարվում աշխատանքային
- Իրանը, նախագուլթանիկ սկավառակավոր դանակը
33. Գուլթանի իրանի ո՞ր մասերն են համարվում աշխատանքային
- Խուփը, թևը
34. Շարքացանի ո՞ր օրգաններն են ապահովում ցանքի տեխնոլոգիական գործընթացը և համարվում աշխատանքային
- Ցանող ապարատները, սերմատար խողովակները, սերմթաղիչները
35. Ի՞նչ մեքենաներ են օգտագործվում մոլախոտերի դեմ քիմիական պայքար իրականացնելու համար
- Սրսկիչներ
36. Ի՞նչ հիմնական մասերից է բաղկացած տրակտորային սրսկիչը
- Բաքից, գտիչից, հեղուկի մղիչից, խողովակաշարից, ապահովիչ և ռեդուկցիոն փականներից, ծայրապանակներից
37. Խոտհնձիչի կտրող ապարատի ո՞ր մասերն են ներառվում կտրող զույգի մեջ
- Մատ, սեզմենտ
38. Ի՞նչ է նշանակում համալրել մեքենատրակտորային ագրեգատը
- Տրակտորին միացնել այնքան մեքենա, որպեսզի տրակտորը կարողանա հաղթահարել դրանց դիմադրությանը և ունենա քարշային ուժի որոշակի պաշար
39. Ինչպիսի՞ գործողություն է համարվում հողի վարը
- Տեխնոլոգիական
40. Ո՞ր դասին են պատկանում «ԴՏ-75Ս» և «Տ-150Կ» մակնիշի տրակտորները
- 30 ԿՆ
41. Ագրեգատի շարժման ո՞ր եղանակն է օգտագործվում ցանքի ժամանակ
- Մորթածև
42. Տրակտորի շահագործման ժամանակ շարժիչի աշխատանքի ո՞ր ռեժիմն է հանդիսանում առավել արդյունավետ
- Անվանական
43. Ի՞նչպես է փոխվում տեղապտույտի մեծությունը քարշային ուժի ավելացման դեպքում
- Սահուն ավելանում է
44. Քանի՞ տոկոսով է ավելանում գուլթանի քարշային դիմադրությունը բթացված խոփերով աշխատելու դեպքում
- 25-30 %
45. Ո՞ր գործոններով է պայմանավորված ագրեգատի հերթափոխային արտադրողականությունը
- Ագրեգատի աշխատանքային ընդգրկումից, արագությունից, զուտ աշխատանքի տևողությունից
46. Ինչպիսի՞ արագության սահմաններում պետք է կատարել ցաքանումն՝ ըստ ագրոտեխնիկական պահանջների
- 3,5-13 կմ/ժամ
47. Ո՞ր գործոնով է պայմանավորված մեկ հեկտարի վրա ծախսվող վառելիքի քանակը
- Ջերթափոխային արտադրողականությունից
48. Ո՞ր գործոններն են հաշվի առնվում վարի ագրեգատ ստեղծելու ժամանակ
- Վարի խորությունը, գուլթանի ընդգրկման լայնությունը, հողի տեսակարար դիմադրությունը

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՀԱՍԱՐ

- Էքսկավատորների տեսակները
 - ա/ Կախովի կամ ինքնագնաց, բ/ Անիվավոր ընթացքով, գ/Թոթուռավոր ընթացքով
- Ո՞ր մակնիշի տրակտորի վրա է տեղադրվում միաշերտփավոր «ԷՕ-2621» մակնիշի էքսկավատորը
 - «ՅՈՒՄՁ-6» մակնիշի տրակտորի վրա
- Ո՞ր սարքի միջոցով է ապահովվում էքսկավատորի աշխատանքային սարքավորումների՝ սլաքի, շերտփի շարժումը
 - Հիդրոզլանների միջոցով
- Կեռաշերտփավորների (սկրեպեր) տեսակները
 - ա/ Կցովի, բ/ Կիսակցովի, գ/ Ինքնագնաց
- Կեռաշերտփավորների (սկրեպեր) ղեկավարման եղանակները
 - ա/Հիդրավլիկական եղանակով, բ/ճոպանաբլուկային եղանակով, գ/Կոմբինացված եղանակով
- Ինչպիսի՞ աշխատանքների համար են բուլդոզերները նախատեսված
 - Գետնի հողմ ըստ երկարության տեղափոխելու, հարթացնելու համար
- Գրեյդերների տեսակները
 - Կցովի, ինքնագնաց
- Գյուղատնտեսական ինչպիսի՞ աշխատանքների համար են նախատեսված փխրեցուցիչները
 - Քարքարոտ հողերը մշակելու համար
- Ապասեղմիչ մեխանիզմը ծառայում է դիզելի գործարկման ժամանակ ներածման փականներ բացման ու դրանք բաց վիճակում պահման համար և ի՞նչ է առաջացնում
 - ա/Նվազում է սեղմված օդի դիմադրությունը, բ/Գլաները տաքանում են, գ/Իջնում է լուղի մածուցիկությունը, դ/Յեշտանում է դիզելի գործարկումը
- Տուրբոկոմպրեսատորը նախատեսված է ճնշման տակ գլանի մեջ օդ մատակարարելու համար և ի՞նչ է առաջացնում
 - ա/Շարժիչի հզորությունը բարձրանում է, բ/Ավելի շատ վառելիք է մատուցվում
- Ե՞րբ է կատարվում տրակտորի N 1 տեխնիկական սպասարկումը
 - Յուրաքանչյուր 60 շարժիչաժամից հետո
- Ո՞ր սարքով է ստուգվում էլեկտրոլիտի խտությունը կուտակչային մարտկոցում
 - Խտաչափով
- Խոտհնձիչի կտրող ապարատի ո՞ր մասերից է բաղկացած կտրող զույգը
 - Մատ, սեզմենտ
- Ի՞նչ է նշանակում համալրել մեքենատրակտորային ագրեգատը
 - Տրակտորին միացնել այնքան մեքենաներ, որպեսզի տրակտորը կարողանա հաղթահարել դրանց դիմադրությունը և ունենա քառաշային ուժի որոշակի պաշար
- Ի՞նչպիսի գործողություն է համարվում հողի վարը
 - Տեխնոլոգիական

16. Ո՞ր դասին են պատկանում «ԴՏ-75Մ» և «Տ-150Կ» մակնիշի տրակտորները

- 30 ԿԼ

17. Ագրեգատի շարժման ո՞ր եղանակն է օգտագործվում ցանքի ժամանակ

- Մորթաձև

18. Տրակտորի շահագործման ժամանակ շարժիչի աշխատանքի ո՞ր ռեժիմն է հանդիսանում առավել արդյունավետ

- Անվանական

19. Որքա՞ն են անիվավոր տրակտորների տեղապատույտի ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ հողի բնականոն խոնավության դեպքում

- 15-17 %

20. Ի՞նչպես է փոփոխվում տեղապատույտի մեծությունը քարշային ուժի ավելացման դեպքում

- Սահուն ավելանում է

21. Քանի՞ տոկոսով է ավելանում գութանի քարշային դիմադրությունը բթացված խոփերով աշխատելու դեպքում

- 25-30 %

22. Ի՞նչ գործոններով է պայամանավորված ագրեգատի հերթափոխային արտադրողականությունը

- Ագրեգատի աշխատանքային ընդգրկումից, արագությունից, զուտ աշխատանքի տևողությունից

23. Ինչպիսի արագության սահմաններում պետք է կատարել ցաքանումն՝ ըստ ագրոտեխնիկական պահանջների

- 3,5-13 կմ/ժամ

24. Ո՞ր գործոնով է պայամանավորված մեկ հեկտարի վրա ծախսվող վառելիքի քանակը

- Ջերթափոխային արտադրողականությունից

25. Ի՞նչ գործոններ են հաշվի առնվում վարի ագրեգատ ստեղծելու ժամանակ

- Վարի խորությունը, գութանի ընդգրկման լայնությունը, հողի տեսակարար դիմադրությունը

ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3. Հանդիպակաց տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա է թույլատրվում վարորդներին հեռակա լույսի փոխարկումը
 - 150 մետրից ոչ պակաս
2. Ճկուն քարշարկման ժամանակ ինչպիսի՞ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել
 - 50 կմ/ժամ
3. Բնակավայրերում վտանգավոր տեղամասերից ո՞րքան հեռավորության վրա են տեղադրվում նախազգուշական նշանները
 - 50-100 մետր
4. Ո՞ր տեղերում է արգելված տրանսպորտային միջոցների կանգառը
 - Կամուրջների տակ
5. Եթե տրանսպորտային միջոցի արգելակման արդյունավետությունը չի համապատասխանում ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներին, ապա ի՞նչ է անհրաժեշտ կատարել
 - Վերացնել անսարքությունը տեղում, իսկ եթե այն չի հաջողվում մեկնել կայանման վայրը՝ պահպանելով անհրաժեշտ նախազգուշական միջոցները
6. Բեռնատար ավտոմեքենայի դողերի պաշտպանիչ շերտի մաշվածության ինչպիսի՞ մնացորդային խորության դեպքում է արգելվում ավտոմեքենայի շահագործումը
 - 1 մմ-ից պակաս
7. Տրանսպորտային ինչպիսի՞ միջոցների վարման դեպքում վարորդները կարող են շեղվել ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներից
 - Հատուկ ծայնային և /կամ/ լուսային ազդանշաններ տվող տրանսպորտային միջոցների և պետավտոտեսչության պարեկային ավտոմեքենաների վարորդները և մոտոցիկլներով ուղեկցողները
8. Ինչպե՞ս պետք է վարվի վարորդը հանդիպակաց տրանսպորտային միջոցի լույսից կուրանալու դեպքում
 - Չփոխելով երթևեկության գոտին, իջեցնել արագությունը կամ կանգնել և միացնել վթարային ազդանշանային համակարգը
9. Ո՞ր դեպքում վարորդը պետք է տրամադրի իր բեռատար ավտոմեքենան պետավտոտեսչության աշխատողին ճանապարհատրանսպորտային պատահարից վնասված տրանսպորտային միջոցը քարշակելու համար
 - Ցանկացած դեպքում
10. Եթե հիդրավլիկ արգելակման համակարգից հեղուկ է հոսում, ապա ճանապարհային երթևեկության կանոններով ի՞նչ է պահանջվում կատարել
 - Վերացնել անսարքությունը տեղում, իսկ եթե այն հնարավոր չէ, մեկնել կայանման վայրը, պահպանելով անհրաժեշտ նախազգուշական միջոցները
11. Որքա՞ն ժամանակ է սահմանված արյան հոսքը դադարեցնող լարանը վնասվածքի վրա պահելու համար
 - 2 ժամից ոչ ավելի
12. Երթևեկության արագությունը ընտրելիս, վարորդը ի՞նչ գործոններ պետք է հաշվի առնի
 - Բոլոր թվարկված գործոնները

13. Ո՞ր տեղում է արգելված տրանսպորտային միջոցների կանգառը

- Թուներում

14. Թույլատրվում է ա՞րդյոք քարշակունը սառցածածկույթի դեպքում

- Թույլատրվում է միայն կոշտ կցիչով

15. Ի՞նչ է նշանակում «Լրիվ զանգված»

- Տրանսպորտային միջոցի փաստացի զանգվածը

16. Տեսանելիության անբավարար պայմաններ են համարվում օդերևութաբանական պայմանները (մառախուղ, անձրև, ձյուն և այլն), որի դեպքում տեսանելիությունը քանի՞ մետր է կազմում

- 300 մետր

17. Ո՞ր դեպքերում է թույլատրվում հատել երթևեկելի մասի եզրը ցույց տվող նշագծման հոծ գիծը

- Ցանկացած դեպքերում

18. Ի՞նչ գույնի պետք է լինեն ավտոմեքենայի վրա տեղադրված լուսասանդրադարձիչները

- Առջևի լուսասանդրադարձիչների գույնը պետք է լինի սպիտակ, կողայինները՝ նարնջագույն, ետևինները՝ կարմիր

19. Բնակավայրերից դուրս ճանապարհների վտանգավոր տեղամասերից ի՞նչ հեռավորության վրա են տեղադրվում նախազգուշական նշանները

- 150-300 մետր

20. Օրվա լուսավոր ժամերին ի՞նչպես է նշվում տրանսպորտային միջոցի այն մասերը, որոնք գաբարիտային լույսերից դուրս են գալիս ըստ լայնքի ավելի քան 0,4 մետր կամ ըստ երկարության 1,0 մետր

- Վահանիկներով կամ դրոշակներով, որոնց վրա տրված են ըստ անկյունագծի իրար հաջորդող կարմիր և սպիտակ գոտիները

21. Ծանրակշիռ կամ մեծածավալ բեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցներն ի՞նչպիսի արագությամբ է թույլատրվում վարել

- Փոխադրման պայմանները համաձայնեցնելու դեպքում պետավտոտեսչության թելադրվածից ոչ ավելի

22. Ա՞րդյոք բնակավայրերում թույլատրվում է տրանսպորտային միջոցների 60 կմ/ժամից ավելի արագությամբ վարումը

- Թույլատրվում է ճանապարհների այն տեղամասերում, որտեղ տեղադրված են համապատասխան նշաններ

23. Դեպի աջ կամ ձախ շրջադարձ կատարելիս, երբ լուսացույցի թույլատրող ազդանշանի դեպքում երթևեկելի մասով անցնում են հետիոտներ, ապա վարորդն ի՞նչ գործողությունների պետք է դիմի

- Հետիոտներին տալ անցում և ավարտել շրջադարձը

24. Առանց պետավտոտեսչության հետ համաձայնեցնելու ի՞նչպիսի բարձրությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցի (բեռով կամ առանց բեռի) շահագործումը

- 4 մետր

25. Թույլատրվում է ա՞րդյոք սայլակավոր մոտոցիկլների քարշակունը

- Թույլատրվում է

26. Ո՞ր դեպքերում են ճանապարհային երթևեկության կանոնները պարտավորեցնում վարորդին տրամադրել իր ավտոմեքենան (մոտոցիկլը) ոստիկանության աշխատակցին
- Անհետաձգելի ծառայողական առաջադրանք կատարելու դեպքում
27. Թույլատրվում է ամբողջ «Կտրուկ վայրէջք» նշանով նշանառված ճանապարհների տեղամասերում երթևեկել անջատված կցորդիչով կամ փոխանցումով երթևեկությունը
- Չի թույլատրվում
28. Կանգառի հրապարակից, ավտոբուսի, տրոլեբուսի տրամվայի կանգառի վայր կամ տաքսիների կայանման վայր նշաններից ի՞նչ մոտ հեռավորության վրա են ճանապարհային երթևեկության կանոնները թույլատրում կանգառը, եթե դա խոչընդոտում է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկությանը
- 15 մետր